Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Նպատակը	Խնդիրը	Պատասխանատու մարմինը	Արդյունքը	Կատար-ման ժամկետը	Ֆինանսա-վորումը (հազար դրամ)
1	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և անհրաժեշտության դեպքում ՀՀ այլ օրենքներում, այդ թվում՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կամ լրացումների կատարում	Հանձնաժողովի, որպես բազմա-ֆունկցիոնալ տնտեսական կարգավորող մարմնի, ֆինանսական անկախության մակարդակի բարձրացումը՝ այդ թվում, ֆինանսական վիճակի բարելավումը	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով սահմանված բյուջեի բանաձևը պետք է փոփոխվի, ինչը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին թույլ կտա ունենալ լրացուցիչ ճկուն ֆոնդ, որը կօտագործվի հետևյալ նպատակների համար.[1]	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Հանրային ծառայություն-ները կարգավորող մարմնի մասին» և անհրաժեշ-տության դեպքում ՀՀ այլ օրենքներում փոփոխություն-ների կամ լրացումների մասին ՀՀ օրենքների նախագծի ներկայացում ՀՀ Ազգային Ժողով	31.03.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

[1] Սույն միջոցառումն իրականացվելու է <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> ՀՀ օրենքով սահմանված քաղաքականության սահմաններում:

			ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակիցներին վճարել մինչև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը գործող և դրանից հետո սահմանված աշխատավարձերի տարբերությունը, որոշակի պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներին վճարել հավելյալ պարգևատրումներ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգով և չափով:				
2	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում և,	Հանձնաժողովի ֆունկցիոնալ անկախության մակարդակի	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում պետք է փոփոխություններ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում	31.03.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի համալրման համապատասխան կանոններում և ընթացակարգերում փոփոխությունների կամ լրացումների կատարում	բարձրացումը	կատարվեն, որոնցով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հնարավորություն կտրվի փոփոխել որոշակի մասնագիտացված պաշտոնների անձնագրերի գծով աշխատակիցների ընտրության չափանիշները (այդ թվում՝ թեկնածուների լրացուցիչ թեսթավորում): Ի լրումն, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը և համապատասխան ընթացակարգերը պետք է փոփոխվեն, այնպես, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հնարավորություն տրվի (i) հաստատված կազմակերպական	ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ (համաձայնությամբ)	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Ազգային Ժողով Անհրաժեշտ-ության դեպքում, աշխատակազմի համալրման համապատասխան կանոն-ներում և ընթացակարգերում փոփոխությունների կամ լրացումների կատարում	31.03.2017թ. Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում	

			կառուցվածքի շրջանակներում թափուր մշտական աշխատատեղերը լրացնելու համար օգտվել բացառապես (ըստ առաջնա-հերթության) ներքին կադրային ռեսուրսներից, այն դեպքերում երբ աշխատակազմում առկա են անհրաժեշտ որակավորում ունեցող թեկնածուներ, և (ii) ժամանակավոր թափուր աշխատատեղերը լրացնել անմիջապես աշխատաշուկայից:				
3	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և անհրաժեշտության դեպքում ՀՀ այլ օրենքներում փոփոխությունների կամ լրացումների կատարում	ՀՀ Սահմանադ-ության փոփոխութ-յուններին համապատասխանեցումը և Հանձնաժողովի գործունեության արդյունավե-տության բարձրացումը	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի մեջ պետք է համապատասխան փոփոխություններ կատարվեն, որոնցով (i) ՀՀ նոր սահմանադրության ներքո կփոփոխվի ՀՀ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և անհրաժեշտության դեպքում ՀՀ այլ օրենքներում փոփոխությունների կամ լրացումների մասին ՀՀ օրենքների նախագծի	31.03.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նոր անդամների նշանակման գործընթացը՝ ներառելով լրացուցիչ չափանիշներ, ինչպիսիք են բիզնեսի ոլորտում և հաճախորդների հետ հարաբերություն-ների ոլորտում փորձը, որոնք հանձնաժողովը պետք է հաշվի առնի նոր անդամներ առաջարկելիս, (ii) կսահմանափակվի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների նշանակման քանակը՝ ոչ ավել, քան երկու անգամ անընդմեջ և (iii) կկրճատվի Հանձնաժողովի		ներկայացում ՀՀ Ազգային Ժողով		

			անդամների պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարելու պահից 3 տարվա ընթացքում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում աշխատելու սահմանափակումը՝ մինչև 1 տարի:				
4	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և անհրաժեշտության դեպքում ՀՀ այլ օրենքներում փոփոխությունների կամ լրացումների կատարում	Կարգավորման արդյունավե-տության բարձրացումը	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքը պետք է լրացվի կարգավորվող բոլոր ոլորտներում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ընդհանուր նպատակները ավելի հստակ սահմանող դրույթով՝ ներառյալ սպառողների համար հիմնավորված գների և	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և անհրաժեշտության դեպքում ՀՀ այլ օրենքներում փոփոխություն-ների կամ լրացումների մասին ՀՀ օրենքների նախագծի ներկայացում ՀՀ Ազգային Ժողով	31.03.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			արդյունավետ ծառայությունների, ինչպես նաև ներդրողների համար համարժեք հասույթ ապահովելու հիմնական նպատակների հավասարակշռութ-յան ապահովումը: Օրենքը պետք է նաև հստակեցնի, որ իբրև լրացուցիչ նպատակ, հավասարակշռված գների ապահովման գործընթացում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է հաշվի առնի սպառողների տարբեր խմբերի կարիքների և իրավիճակի մասին համապատասխան հիմնավորված տեղեկատվությունը:				
5	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ	Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության նոր	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում	31.03.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարգերում փոփոխությունների կամ լրացումների կատարում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր որոշումներում նշում է, թե որոշման կայացման գործընթացում սպառողների որ շահերը կամ դրանց վերաբերյալ ներկայացուցչութ-յուններն են հաշվի առնվել:	երաշխիքի սահմանումը	կարգերում, և, ՀՀ նոր սահմանադրության 86-րդ հոդվածի ներքո՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում, պետք է փոփոխոխություններ կատարվեն, որոնցով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հստակ պահանջ կներկայացվի հաշվի առնել սպառողների տեսակետները՝ հավասարակշռված որոշումներ կայացնելու գործում: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր որոշումներում պետք է նշի, թե որոշման կայացման գործընթացում սպառողների որ շահերը կամ դրանց վերաբերյալ ներկայացուցչությունն ե	կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	փոփոխությունների կամ լրացումների մասին ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Ազգային Ժողով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարգերում կատարված փոփոխությունների հրապարակում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներում հղումներ՝ սպառողների շահերին և ներկայացուցչությունն ներին	30.06.2017թ. Սկսած 01.01.2017թ. գործող օրենքների ներքո	

			րն են հաշվի առնվել:				

6	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում, անհրաժեշտության դեպքում՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ այլ օրենքներում փոփոխությունների կամ լրացումների կատարում	Հանրային հնչեղություն ունեցող և սպառողների շահերի պաշտպանությանը վերաբերող Հանձնաժողովի որոշումների կայացման գործընթացում հասարա-կական կազմակեր-պությունների՝ առավել ակտիվ ներգրավվա-ծության ապահովումը, ինչպես նաև հասարա-կական կազմակեր-պությունների մասնագիտակ ան գիտելիք-ների մակար-	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Հասարակական կազմակերպություն-ների մասին» ՀՀ օրենքներում պետք է փոփոխություններ կատարվեն, որոնք ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին թույլ կտան կարգավորման վճարներից գոյացած իր տարեկան բյուջեի 1%-ն ուղղել հատուկ ֆոնդի, որը հասանելի կլինի սպառողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», անհրաժեշտության դեպքում՝ «Հասարակական կազմակերպություն ների մասին» և ՀՀ այլ օրենքներում փոփոխությունների կամ լրացումների օրենքների նախագծի մասին ներկայացում ՀՀ Ազգային Ժողով	31.03.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		դակի բարձրացումը և դրանց կատարելագործումը	հավաստագրված ՀԿ-ներին[2]				
7	Միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծում՝ համապատասխան առաջարկությունների մշակման նպատակով: Առաջարկների հիման վրա, անհրաժեշտության դեպքում, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի հաստատում և ՀՀ համապատասխան օրենքներում փոփոխությունների կամ լրացումների կատարում	Հանձնաժողովի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավասությունների առավել հստակեցումը	Համապատասխան օրենքներում և իրավական ակտերում պետք է փոփոխություններ կատարվեն, որոնցով կհստակեցվի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համագործակցության պահանջը՝ այն շուկաների սահմանման հարցում, որտեղ սպառողներին անհրաժեշտ կլինի պաշտպանել գերիշխող դիրք ունեցող	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ), ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)	Միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծում, միջգերատեսչական աշխատանքային խմբի եզրակացության ներկայացում ՀՀ կառավա-րություն, անհրաժեշտության դեպքում՝ ենթաօրենսդ-րական ակտերի և համապատաս-խան օրենքների փոփոխություն-ների հաստատում	17.10.2016թ. 01.10.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

[2] Հասարակական կազմակերպությունների հավաստագրումը և հատկացվող գումարների բաշխումն իրականացվելու է անկախ հասարակական կազմակերպության կամ երրորդ անձի կողմից:

			ընկերությունների խախտումներից: Իրավական փոփոխությունների մշակման գործընթացը սեղմ ժամկետում ավարտելու համար պետք է ստեղծվի միջգերատեսչական հանձնաժողով:				
8	Մշակել և իրականացնել հատուկ գործողություններ, որոնք ուղղված կլինեն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան բյուջեի հաստատման և գործունեության տարեկան ծրագրի ներկայացման գործընթացների թափանցիկության բարձրացմանը	Հանձնաժողովի գործունեության թափանցի-կության մակարդակի բարձրացումը	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցելով բարելավի իր տարեկան բյուջեի և գործունեության ծրագրի հաստատման համապատասխան գործընթացների թափանցիկությունը՝ կառավարության ծրագրային բյուջետավորման ընդհանուր մոտեցմանը աջակցելու նպատակով՝ հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության տարեկան ծրագրի նախագծի և բյուջեի հրապարակում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքէջում	Մինչև 17.10.2016թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			կարգավորող հանձնաժողովի բյուջետային առաջարկները և դրանց հետ կապակցված տարեկան գործունեության ծրագրերը Ազգային Ժողով ներկայացնելու ընթացակարգերը և ժամկետները:				
9	Հրապարակել խորհրդատվության արդյունքները, վերլուծել տեսակետներն ըստ կարգավորվող ոլորտների և առաջարկներ ձևակերպել՝ տարեկան ծրագրում բարձրացված խնդիրները արտացոլելու վերաբերյալ	Հանձնաժողովի հաշվետվո-ղականության մակարդակի բարձրացումը	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է տարեկան հանրային խորհրդատվություն կազմակերպի՝ իր գործունեության տարեկան ծրագրի նախագծի բովանդակության և բյուջեի շուրջ: Գործունեության ծրագրի նախագիծը պետք է ներառի առաջարկվող հիմնական կատարողական ցուցանիշները և եռամսյակային կտրվածքով	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան գործունեության ծրագրում այդ խնդիրների արտացլում և հաստատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ	Մինչև 17.10.2016թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			ակնկալվող հիմնական արդյունքները: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է վերլուծի խորհրդատվության ընթացքում ստացված տեսակետներն ըստ ոլորտների, և գործունեության վերջնական հաստատված ծրագրում նկարագրի, թե ինչպես են այդ տեսակետները հաշվի առնվել:				
10	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան ծրագրի փոփոխությունների հրապարակում հանձնաժողովի կայքէջում՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի օրակարգում գտնվող	Հանձնաժողովի հաշվետվո-ղականության մակարդակի բարձրացումը, հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացումը և հանրային հատվածի հետ առավել սերտ կապի	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է շարունակի առնվազը եռամսյակային կտրվածքով հրապարակել իր գործունեության ծրագրով նախատեսված ժամանակացույցի ամենաթարմ տարբերակը: Սա թույլ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Եռամսյակային կտրվածքով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տարեկան ծրագրի հրապարակում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝	Սկսած 17.10.2016թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	որոշումների մասին հանրությանը հակիրճ տեղեկատվություն տրամադրելու համար:	ամրապնդումը	կտա ապահովել շահառուների տեղեկացվածությունն այն մասին, թե տարվա ընթացքում երբ և ինչպես իրականացվելու որոշումների կայացումը՝ գործունեության տարեկան ծրագրի հաստատումից հետո տեղի ունեցած հնարավոր զարգացումների ներքո:		համապատասխան կարճ նկարագրությամբ (պաշտոնական մամլո հաղորդագրություն)		
11	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ծրագրերում և տարեկան հաշվետվություններում սպառողների և այլ շահառուների բարձրացրած խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների արտացոլում	Սպառողների և այլ շահառուների իրավունքների և շահերի պաշտպանության լրացուցիչ մեխանիզմների ներդրում	Գործունեության ծրագիրը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ազգային ժողով ներկայացնելիս և տարեկան հաշվետվությունը մամուլում հրապարակելիս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ տարեկան հաշվետվությունը և գործունեության ծրագիրը հաստատելու մասին, որտեղ արտացոլված կլինի սպառողների կողմից բարձրացված և ՀՀ հանրային ծառայությունները	17.10.2016թ. գործողությունների ծրագրի համար 01.05.2017թ. տարեկան հաշվետվության համար	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			պետք է նկարագրի, թե ինչպես են սպառողների և այլ շահառուների կողմից բարձրացված խնդիրներն արտացոլվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ծրագրում և որոշումներում՝ հնարավորության դեպքում հղում կատարելով նախորդ ժամանակահատ-վածի՝ արտաքին աուդիտ անցած գործունեությանը:		կարգավորող հանձնաժողովի գործունեության ծրագրերում ներառված սպառողների խնդիրների լուծման ուղղված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի իրականացրած աշխատանքները՝ նախորդ տարվա բյուջեի և պլանավորված բյուջեի կոնտեքստում		
12	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից առանցքային որոշումների շուրջ հանրային խորհրդակցություններ ի կազմակերպում, որոնց ընթացքում ներկայացվում են	Հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացում շահագրգիռ կողմերի առավել ակտիվ մասնակցությա ն ապահովումը և լսումների ընթացքում	Բոլոր առանցքային որոշումների դեպքում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է հանրային խորհրդակցությունների ընթացքում ներկայացնի իր կողմից առաջարկվող կոնկրետ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Խորհրդակցութ-յունների արդյունքների հրապարակում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:	Սկսած 10.01.2017թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	մեթոդաբանական այլընտրանքները: Խորհրդակցություններ ը պետք է տևեն առնվազն մեկ ամիս, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:	ներկայացվող կարծիքների և առաջարկությունների որակի բարձրացումը	մեթոդաբանություն-ները: Այն դեպքերում, երբ գործող օրենսդրությամբ որոշումների կայացումն իրականացվում է Հանձնաժողովի հայեցողությամբ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է խորհրդակցություն-ների համար նախատեսի առնվազն մեկ ամիս: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ ոլորտային օրենքներով, այլ ժամկետներ են սահմանված:				
13	Վերանայված հաստիքների հաստատման վերաբերյալ ՀՀ վարչապետից համաձայնության ստացում	Հանձնաժո-ղովի աշխատանքի արդյունավե-տության բարձրացումը	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներում անձնակազմի	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ), ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	Հաստիքների իրավական հաստատում Պաշտոնների վերանայված անձնագրեր	Սույն աղյուսակի 1-ին և 2-րդ կետերի գործողություններ և փաստա-թղթային	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	Պաշտոնների վերանայված անձնագրերի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդից համաձայնության ստացում		վարձատրությանն ու համալրմանը վերաբերող առաջարկվող փոփոխությունները կատարելուց հետո, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է մինչև 2017 թ. հունիս ամիսը փորձի հաստատում ստանալ հաստիքների վերանայված քանակի և փոփոխված անձնագրերի վերաբերյալ: Այս փոփոխությունները պետք է հաշվի առնեն Ասիական զարգացման բանկի հաշվետվության մեջ նկարագրված առաջարկները, և առաջարկներից շեղումը պետք է հիմնավորվի:	(համաձայնությամբ)		ապացույց-ներն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում	
14	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կազմակերպական	Հանձնաժողովի աշխատանքի արդյունավետության բարձրացումը	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Քաղաքացիական	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	2018 թ. համար նոր կազմակերպա-կան կառուցվածքը հաստատող որոշում	Սույն աղյուսակի 1-ին և 2-րդ կետերի գործողութ-	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	կառուցվածքի փոփոխություն		ծառայության մասին» օրենքներում ՀՀ աշխատակազմի համալրման ու վարձատրության առաջարկվող փոփոխությունները կատարելուց հետո ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է մինչև 2018 թվականը վերանայի իր կազմակերպական կառուցվածքը: Այս փոփոխությունները պետք է հաշվի առնեն Ասիական զարգացման բանկի հաշվետվության մեջ նկարագրված առաջարկները, և առաջարկներից շեղումը պետք է հիմնավորվի:			յունները և փաստա-թղթային ապացույց-ներն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում	
15	Վերլուծել հաստիքների հաստատման պահանջը հանելու ազդեցությունը ՀՀ հանրային ծառայությունները	Հանձնաժողովի անկախության աստիճանի բարձրացումը	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներում	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	Կառավարության դիրքորոշում	Սույն աղյուսակի 1-ին և 2-րդ կետերի գործողութ-յունները ավարտե-	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	կարգավորող հանձնաժողովի անկախության վրա՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի այլ փոփոխությունների կոնտեքստում:		առաջարկվող փոփոխությունները կատարելուց հետո, ՀՀ կառավարությունը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է քննարկեն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում ՀՀ վարչապետի կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստիքները հաստատելու վերաբերյալ պահանջը ապագայում պահպանելու անհրաժեշտությունը:			լուց հետո եռամսյա ժամկետում	